ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

ԹԻՎ 28 «26» փետրվարի 2020թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ պարոն՝
Հ.Մաթևոսյան

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու 2020թվականի փետրվարի 25-ի թիվ 3 նիստի N8-Ն որոշումը:

Առդիր՝ 59 թերթ:

Արևադաշտ համայնքի ղեկավար՝ Հ.Օհանյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Մ-04014-2020
26 02 2020թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

25.02.2020թ. N 8-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 30-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով 13.02.2020թվականի թիվ 27.3/3099-20 գրությունը <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2019 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 30-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին >> որոշման նախագծի վերաբերյալ պետական փորձագիտական եզրակացությունը .

### ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2019 թվականի դեկտեմբերի 16-ի<< Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 30-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը:

1/ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ վարչական բյուջեի ազատ մնացորդը 100.000 ՀՀ դրամը և ֆոնդային բյուջեի 151.000 ՀՀ դրամ մնացորդը ուղղել ֆոնդային բյուջեի 01-1-1 5121հոդվածին: Հողի օտարումից 22050022 դրամը ուղղել 06-3-1 5122 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ղեկավար Հ.Օհանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010 Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
Էլ. փոստ՝ press@moj.am

ՂԼ.3/3099-20
13 02 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ԱՐԵՎԱԴԱՇՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՕՀԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Օհանյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի փետրվարի 6-ի թիվ 17 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 30-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝ Կ. ԽՍՐՅԱՆ

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ան.Գևորգյան, հեռ. 594116

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 30-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 30-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի 1-ին կետից անհրաժեշտ է հանել «Հաստատել» բառը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**